

**ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ԴՐՍԵՒՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

ՎԻԿՏՈՐ Լ. ԿԱՏՎԱԼԵԱՆ

Հայ բարբառագիտութեան համար ձեռային, ձեռաբանական եւ կիրառական առումներով որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում ցուցական այս, այդ, այն եւ սա, դա, նա դերանունների բարբառային դրսեւորումները: Լինելով խօսքում առաւել գործածական միաւորներ՝ նրանց դիտարկման շնորհիւ յաճախ կարելի է պարզաբանել ինչպէս բարբառների փոխյարաբերութիւններին, այնպէս էլ լեզուի պատմութեանը վերաբերող մի շարք հարցեր: Ընդհանրապէս այդ դերանունները թէ՛ հայերէնի զարգացման տարբեր շրջաններում, թէ՛ բարբառներում ունեն բազմազան արտայայտութիւններ, բայց դրանց բոլորի համար ընդհանուր են արմատական ս, դ(տ), ն հնչիւնները եւ դերանունական համապատասխան իմաստները:

Գրաբարում ցուցական դերանունները ենթարկւում էին դերանունական հոլովման՝ եզակի սեռական եւ տրական հոլովներում ունենալով տարբեր ձեւեր: Սա, դա, նա դերանունները եզակի սեռականում աւարտւում էին սո, դո, նո հիմքերի վրայ աւելացող ըս խմբով (սորա, դորա, նորա), անկախ էին եւ գոյականների հետ չէին գործածւում: Իսկ այս, այդ, այն դերանունները եզակի սեռականում աւարտւում էին ը հոլովակազմիչով կամ որ խմբին յաջորդող իկ մասնիկով (այսր, այսորիկ, այդր, այդորիկ, այնր, այնորիկ), գոյականների հետ գործածւում էին: Միջին հայերէնում ցուցականների սեռականն ու տրականը արդէն տարբեր ձեւեր չունէին եւ ունէին նոյն՝ ը հոլովակազմիչը, իսկ միւս հոլովները կազմւում էին տրականից (օրինակ՝ ուղղ. այս, սեռ. եւ տր. այսոր, բաց. յայսոր): Այս շրջանում այս, այդ, այն, սա, դա, նա դերանունների հետ գործառուում էին նաեւ իսա, իդա (իտա), ինա ցուցականները, որոնք ունէին միայն ուղղական եւ հայցական հոլովներ¹:

Բոլոր բարբառներում գոյութիւն ունեն այս, այդ, այն դերանունների համապատասխան ձեւեր, իսկ սա, դա, նա դերանունների ձեւեր շատ բարբառներում չկան²: Նաեւ այս, այդ, այն դերանունների բարբառային ձեւերը աւելի բազմազան են ե՛ւ կազմութեամբ, ե՛ւ քերականական յատկանիչներով:

Իհարկէ, մէկ յօդուածի շրջանակներում հնարաւոր չէ դիտարկել ցուցական դերանունների բարբառային բոլոր դրսեւորումները եւ դրանց բոլոր յատկանիչները, բայց միւս կողմից՝ բարբառային իրողութիւնների հետազօտումը աւելի արդիւնաւէտ եւ մեկնաբանութիւնը աւելի հաւաստի կարող է լինել տարբեր բարբառախմբերի բարբառների տուեալների համադրմամբ եւ համեմատութեամբ, ուստի ցուցական դերանունների բարբառային ձեւերի որոշ առանձնախտկութիւններ դիտարկում ենք հիմնականում արեւելեան իմբալիցութեան Արարատեան, Բայազէտի, Խոյ-Մարաղայի եւ արեւմտեան իմբալիցութեան Վանի, Դիադինի, Մշոյ բարբառների, առանձին դէպքերում՝ նաեւ այլ բարբառների ընձեռած նիւթի շրջանակներում:

Ցուցական դերանունների բարբառային իւրայատկութիւնները դրսեւորուում են նախ եւ առաջ ուղիղ ձեւերում, հոլովուելիս՝ նաեւ սեռականի ձեւերում, որոնցից էլ համապատասխան վերջաւորութիւններով կազմուում են մնացած հոլովաձեւերը: Հետեւաբար, այդ դերանունների ձեւային եւ ձեւաբանական հիմնական յատկանիշները դիտարկուում են հենց ուղիղ եւ սեռականի ձեւերի համադրմամբ:

Վերոյիշեալ բարբառներում ցուցականներն ունեն հետեւեալ ուղիղ ձեւերը. Արարատեան բարբառ՝ *էս, էտ, էն/սա, դա, նա, Բայազէտի բարբառ՝ էս, էտ, էն/էսի, էտի, էնի/էսիկ, էտիկ, էնիկ/էսա, էտա, էնա/էսակ, էտակ, էնակ, Խոյ-Մարաղայի՝ էտ, էն/էտիկ, էնիկ, Վանի՝ էս, էսի/էտ, էտի/էն, էնի/էսա, էտա, էնա/էսիկ, էտիկ, էնիկ, Մշոյ՝ իդա, ինա/ըդի, ընի, Դիադինի՝ էս, էտ, էն/էսի, էտի, էնի/էսան, էտան, էնան:*

Ինչպէս երեւում է, միայն Արարատեան բարբառն ունի սա, դա, նա ձեւերը³, մինչդեռ բոլոր բարբառներն էլ ունեն այս, այդ, այն խմբի համապատասխանութիւնները՝ *էս, էտ, էն* հիմքերով: Մշոյ բարբառի ձեւերը առանձնանում են բառասկզբի ձայնաւորի տարբերութեամբ՝ *իդա, ինա, ըդի, ընի: Խոյ-Մարաղայի եւ Մշոյ բարբառներում այս ցուցական դերանուններն իմաստով յատուկ ձեւեր չկան, որ սակայն, չի նշանակում նաեւ իմաստի բացակայութիւն. էտ, էտիկ ձեւերը Խոյ-Մարաղայի բարբառում եւ իդա, ըդի դերանունները Մշոյ բարբառում գործառուում են նաեւ այս դերանուններն իմաստով:*

Այս, այդ, այն ցուցականների զուգահեռները բարբառներում հանդէս են բերում կազմութեան զանազանութիւններ. դրանք կամ պարզ են, կամ յաւելուածաւոր: Ըստ այդմ՝ դիտարկուող բարբառները բաժանուում են երեք խմբի.

ա) Միայն պարզ կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Արարատեան բարբառը (*էս, էտ, էն*).

բ) Միայն յաւելուածաւոր կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Մշոյ բարբառը (*իդա, ինա, ըդի, ընի*).

գ) Ե՛ւ պարզ, ե՛ւ յաւելուածաւոր կազմութեան դերանուններ ունեցող, ինչպէս՝ Վանի, Խոյ-Մարաղայի, Դիադինի եւ Բայազէտի բարբառները (*էս, էսա, էսի, էսիկ, էսակ, էսան*):

Դիտարկումները ցոյց են տալիս, որ դերանունական յաւելուածները բարբառներում կարող են ունենալ տարբեր դեր.-

Ա յաւելուածը ունենում է սոսկ իմաստային՝ ցուցականութիւնը ընդգծող արժէք⁴: Այստեղ ե՛ւ էս, էտ, էն ձեւերը, ե՛ւ էսա, էտա, էնա ձեւերը խօսքում դառնում են միայն որոշիչ եւ չեն հոլովուում (*էս գ'իրքը վէռցա - էսա գ'իրքը վէռցա*), այսինքն՝ ունեն ածականական գործածութիւն:

Ի կամ իկ, ակ յաւելուած ունեցող ձեւերը իրենց դրսեւորում են սա, դա, նա դերանունների օրինակով եւ իմաստով, ունեն միայն գոյականական գործածութիւն: Սրանք խօսքում որոշիչ չեն դառնում, ի յաւելուածով ձեւերը հոլովուում են եւ կատարում գոյականին յատուկ դերեր, իսկ իկ կամ ակ յաւելուածով ձեւերը գործածուում են միայն եզակի ուղղական եւ հայցական հոլովներով (*էտիկ հընգաւ. էտիկ դ'ի տեղը, էտակ էթում. էտակ տու ընձի*): Ի դէպ, Հրաչեայ Աճառեանը նկատել է, որ հայերէնի բարբառներում իկ ունեցող բոլոր ցուցականներն էլ չեն հոլովուում եւ յոգնակի չունեն, եւ տուել է հետեւեալ բացատրութիւնը. «Իկ նշանը դրոււմ է դերանունը ածականի հետ չլիքելու»

համար. շփոթութիւնը կարող է տեղի ունենալ միմիայն եզակի եւ անհոլով դէպքում, այն է՝ եզ. ուղ. եւ հյց., հետեւաբար -իկ մասնիկը դրոււմ է միայն այս դէպքերում, ուրիշ խօսքով՝ անհոլով է»⁵:

Բարբառներում դերանունների գործառական իւրայատկութիւններին անդրադառնալով՝ Աճառեանը նշում է, որ ցուցական դերանունները կարող են ունենալ ինչպէս դերանուանական, այնպէս էլ ածականական կիրառութիւն, այսինքն՝ խօսքում կարող են հանդէս գալ նաեւ իբրեւ որոշիչ: Ըստ նրա՝ հայերէնի բարբառները պարզ ձեւերը (այս, սա) դարձրել են ածական (այսինքն՝ որոշչային կիրառութիւն ունեցող), իսկ սրանց վրայ աւելացնելով իկ յաւելուածը՝ վերածել են դերանուան, որտեղից էլ վերջաձայն կի կրճատումով առաջացել են իով աւարտուող ձեւերը, ինչպէս՝ ասիկ-ասի, ադիկ-ադի, անիկ-անի/իսիկ-իսի, իդիկ-իդի, ինիկ-ինի եւն.⁶: Բարբառային ցուցականների իկ յաւելուածը, կարծում ենք, առնչուում է գրաբարեան այս, այդ, այն ցուցական դերանունների հոլովական երկար ձեւերում հանդէս եկող իկին (այս, այսորիկ, այսմիկ, այսոքիկ, այսոցիկ եւն.): Այդ մասին դիտողութիւն ունի նաեւ Գէորգ Զահուկեանը՝ «Յուցական դերանունների իկը ամենայն հաւանականութեամբ իին հայերէնի համապատասխան ձեւերի մնացորդն է»⁷:

Բարբառներում ցուցականները եւ դրանց սեռական հոլովաձեւերը երեւան են հանում հետեւեալ պատկերը.

Վանի բարբառ.

Եզակի

Ուղղ. էս, էսի, էսա էտ, էտի, էտա էն, էնի, էնա

Սեռ. իսոր իտոր ինոր

Յոգնակի

Ուղղ. իսոնք իտոնք ինոնք

Սեռ. իսոնց իտոնց ինոնց

Մշոյ բարբառ.

Եզակի

Ուղղ. - իդա ինա ընի

Սեռ. - իդոր ընդոր ընդրա

Յոգնակի

Ուղղ. - իդոնք ընդոնք ընդոնք

Սեռ. - իդոնց ընդոնց ըն/դ/ոնց

Խոյ-Մարաղայի բարբառ.

Եզակի

Ուղղ. - էտ, էտիկ էն, էնիկ

Սեռ. - տՄր դՄր

Յոգնակի

Ուղղ. - տՄնք, տՄնքիկ դՄնք, դՄնքիկ

Սեռ. տՄնց դՄնց

Դիադիւնի բարբառ.

Եզակի

Ուղղ. էսան էտան էնան

Սեռ. ըստոր ըտոր ընդոր

Յոգնակի

Ուղղ. (է)ըստոնք (է)ըստոնք (է)ընդոնք
 Սեռ. (է)ըստոնց (է)ըստոնց (է)ընդոնց
Արարատեան բարբառ
 Եզակի
 Ուղղ. էս էս էն
 Սեռ. (է)ըստուր (է)ըստուր (է)ընդուր
 Յոգնակի
 Ուղղ. (է)ըստօնք (է)ըստօնք (է)ընդօնք
 Սեռ. (է)ըստօնց (է)ըստօնց (է)ընդօնց
Բայագէտի բարբառ
 Եզակի
 Ուղղ. էսի էտի էնի
 Սեռ. ըստու ըտու ընդու
 Յոգնակի
 Ուղղ. /ը/ստոնք ըստոնք ընդոնք
 Սեռ. /ը/ստոնց ըստոնց ընդոնց

Դերանունների սեռական հոլովածները բարբառներում ունեն ինչպէս ընդհանրութիւններ, այնպէս էլ տարբերութիւններ: Նախ եւ առաջ նկատելի է եզակի թուի այդ հոլովումը ր հոլովակազմիչի առկայութիւնը բոլոր բարբառներում (խոր, իդոր, տ՛Ար, ըստոր, ըստուր), բացի Բայագէտի բարբառից: Ընդհանրապէս հայերէնում դերանունների հոլովման մէջ սեռականում ր հոլովակազմիչը տարածուած իրողութիւն է (մենք-մեր, դուք-ձեր, ինքը-իր, սասորա, դա-դորա, նա-նորա, սոյն-սորին, դոյն-դորին, նոյն-նորին, այս-այսր, այսորիկ, ո՛-ոյր, զի՞-է՞ր, ոմն-ուրումն, ոք-ուրուք, իմն-իրիք), հետեւաբար՝ դիտարկուող ձեւերում րի առկայութիւնը հայերէնի դերանունական համակարգին բնորոշ ընդհանուր իրողութեան արտայայտութիւն է: Թերեւս Բայագէտի բարբառում ցուցականների եզակի սեռականում տեղի է ունեցել րի անկում, մասնաւոր որ Արարատեան բարբառի համապատասխան ձեւերը Բայագէտի բարբառի ձեւերից տարբերում են միայն րի առկայութեամբ՝ ըստուր, ըտուր, ընդուր (Արտ.) - ըստու, ըտու, ընդու (Բյգտ.): Այդ անկմանը հաւանաբար նպաստել է այն, որ դերանունները ուղիղ ձեւում աւարտուել են ի հնչիւնով (էսիկ, էտիկ, էնիկ>էսի, էտի, էնի)՝ այդպիսով նմանուելով ՈՒ հոլովման ենթարկուող բառերին եւ հոլովուելով դրանց պէս:

Այսպիսով, դիտարկուող բարբառներում ցուցական յիշեալ դերանունները եզակիում ենթարկում են դերանունական հոլովման, բացառութեամբ Բայագէտի բարբառի, որտեղ դրանք ենթարկում են անունական ՈՒ հոլովման: Յոգնակիում ցուցականները բոլոր բարբառներում ենթարկում են Յ անունական հոլովման:

Եթէ մի կողմ թողնենք Բայագէտի բարբառի ձեւերը, միւս բարբառներում ցուցականները եզակի սեռականում ունենում են որ, ուր մասնիկներ: Վանի, Մշոյ եւ Դիագիւնի բարբառներում հանդէս է գալիս որ մասնիկը (խոր, իդոր, ըստոր), Արարատեան բարբառում՝ ուր մասնիկը: Կարծում ենք՝ այս երկու մասնիկներն էլ առնչում են զբաբարեան որ մասնիկին (այսորիկ, այդորիկ, այնորիկ)⁵: Ի դէպ, Ժամանակին համանման կարծիք Վանի բարբառի ձեւերի

վերաբերեալ յայտնել է Արարատ Ղարիբեանը. «սեռականը ստանում է «որ» վերջաւորութիւնը, որ գտնում ենք գրաբարեան սորա, դորա, նորա, այսորիկ, այդորիկ, այնորիկ ձեւերի մէջ»⁹: Թւում է՝ Արարատեան բարբառում որի դիմաց ուր մասնիկի դրսեւորումը արդիւնք է ՈՒ հոլովման ազդեցութեան, մանաւանդ եթէ նկատի ունենանք բացառականի ձեւը՝ ըստուց:

Ինչ վերաբերում է Խոյ-Մարաղայի բարբառի տՄԱր, դՄԱր սեռականներին, ապա դրանք ստացել են տարբեր մեկնաբանութիւններ: Աճառեանը գտնում է, որ այդ սեռականները կազմւում են ոչ թէ ուղղականի էտ, էտիկ/էն, էնիկ/ձեւերից, այլ սա, դա, նա դերանուններից¹⁰: Ըստ նրա՝ որոշ բարբառներում (ինչպէս նաեւ Մարաղայում) սա, դա, նա դերանունների սորա, դորա, նորա սեռականներում ո ձայնաւորը վերածուել է աի, ու առաջացել են սարա, դարա, նարա ձեւեր, որոնց վերջածայն աի անկումով էլ ձեւացել են Մարաղայի տՄԱր, նՄԱր (դրա, նրա) ձեւերը: Միւս կողմից՝ Աճառեանը գտնում է, որ նա դերանունն նրա սեռականում դ հնչիւնի յաւելումով ստացուել է նդրա, ապա ընդրա, եւ այդպէս ձեւացել են ոչ միայն Ղարաբաղի բարբառի ընդրա, ընդրան ձեւերը, այլ նաեւ Մարաղայի ինդար, ինդՄԱր, ինդՄԱրՁն ձեւերը, իսկ ին մասի անկումով էլ ստացուել է Ուրմիայի դՄԱր ձեւը¹¹: Այլ տեսակէտ ունի Ղարիբեանը, որը Ուրմիայի բարբառի էն դերանունն դՄԱր սեռականը բխեցնում է նախնական ամբողջական էնդՄԱր ձեւից, որի ն հնչիւնի ձայնեղացնող յատկութեամբ էլ պայմանաւորում է բառասկզբում ձայնեղ չունեցող բարբառում դՄԱր ձեւի սկզբում ձայնեղ դի առկայութիւնը¹²:

Մենք կարծում ենք, որ Խոյ-Մարաղայի բարբառում դերանունների սեռական հոլովաձեւերը (տՄԱր, դՄԱր) իրենց կազմում ունեն ՄԱր բաղադրիչը, որը համապատասխանում է այլ բարբառների որ մասնիկին (հնարաւոր է՝ այս բարբառում որոշ դէպքերում ո>ա հնչիւնափոխութեան միտում է եղել, եթէ նկատի ունենանք ու>վՄԱլ, ջու>ձՄԱլ օրինակները): Նախնական ամբողջական ձեւերի սկզբում տեղի ունեցած հնչիւնական անկումների արդիւնքում էլ առաջացել են Մարաղայի տՄԱր, նՄԱր եւ Ուրմիայի տՄԱր, դՄԱր ձեւերը: Մեր կարծիքով, դիտարկւող սեռականները ոչ թէ դա, նա, այլ էտ, էն դերանունների ձեւերն են: Այս տեսակէտը պնդելու համար ունենք հետեւեալ փաստարկները:

ա) Բարբառներում, որպէս կանոն, իկ յաւելուած ստանում են էս, էտ, էն (այս, այդ, այն) ցուցականները: Խոյ-Մարաղայի բարբառում իկ յաւելուածով զուգահեռ ձեւեր դրսեւորւում են ոչ միայն եզակի ուղղականում (էտ, էտիկ, էն, էնիկ), այլ նաեւ այլ հոլովներում, ինչպէս՝ տր․, հայց․ տՄԱրը-տարիկը, դՄԱրը-դՄԱրիկը, բաց․ տՄԱրէն-տՄԱրիկէն, դՄԱրէն-դՄԱրիկէն, գործ․ տՄԱրով-տՄԱրիկով, դՄԱրով-դՄԱրիկով, եւ ինչպէս տեսնում ենք, բոլորում էլ պահպանւում է որ հոլովակազմիչը: Ճիշտ է, սա, դա, նա դերանունները եւս առանձին բարբառներում երբեմն ունենում են յաւելուածաւոր ձեւեր (սայիկա, դայիկա, նայիկա, սվիկա, դվիկա, նվիկա, սավիկա, դավիկա, նավիկա եւն․), բայց սրանց սակաւադէպ յաւելուածաւոր թեք հոլովաձեւերը իրենց կազմում երբեք ը չեն ունենում (դավգէ, դագէց, դըգէց, նագէ, նգէ, նվգէ՝ Պլս․, սագից՝ ՆՆխ․), այսինքն՝ սեռական-տրականից չեն կազմւում:

բ) Թէ՛ գրաբարում, թէ՛ միջին հայերէնում եւ թէ՛ բարբառներում այս, այդ, այն, էս, էդ, էն ցուցականների յոգնակի ուղղականը կազմւում է եզակի

ուղղականից, ուստի այդտեղ բացակայում է սեռականի ը հոլովակազմիչը (այսք, այսքիկ, այսք, հասօնք, ըստոնք, հատունք, աստուք, իսօնք, իսոնք, ըստունք, Ասիւնք, ասօնք եւն., Խոյ-Մարաղայի բարբառում՝ տԱնք, տԱնքիկ, դԱնք, դանքիկ), մինչդեռ սա, դա, նա դերանունների յոգնակի ուղղականը բարբառներում եւ գրական արեւելահայերէնում, ի տարբերութիւն գրաբարի, որպէս կանոն կազմում է եզակի տրականից, ուստի իր մէջ ունի սեռական-տրականի ըն , ինչպէս՝ նրա-նրան-նրանք (Թբ., Շմխ.), տրա-տրան-տրանք (Աստրխ.), սօ(սա)-սրօ-սրուք (Ագլս.): Բացառութիւն են, օրինակ, Պոլսի եւ Նոր Նախիջեւանի բարբառները, որոնցում սա, դա, նա դերանունները յոգնակի ուղղականի կազմում ը չունեն. փոխարէնը դրանք կամ ակնյայտօրէն գրաբարատիպ են (ինչպէս՝ սաքա, դաքա, նաքա - ՆՆխ.), կամ իրենց կազմում «ներդաշնակութեան համար»¹³ ունեն վ հնչիւն (ինչպէս՝ սափօնք, դափօնք, նափօնք - Պլս.): Ի դէպ, ՆՆխ-ի սաքա, դաքա, նաքա յոգնակիների թեք հոլովներում այնուամենայնիւ ը հանդիպում է (ինչպէս՝ սեռ.-տր. սարանց, դարանց, նարանց, բաց. սարանցմէն, դարանցմէն, նարանցմէն, գործ.՝ սարանցմօվ, դարանցմօվ, նարանցմօվ): Մինչդեռ հս, հտ, էն դերանունները յոգնակիի որեւ հոլովում ոչ մի բարբառում (նաեւ՝ Խոյ-Մարաղայի բարբառում) իրենց կազմում ը չունեն:

Կարելի է նաեւ պնդել, որ, օրինակ, Մարաղայի նԱր սեռականը համապատասխան է Վանի բարբառի ինոր ձեւի: Այդ է վկայում Մարաղայում առկա զուգահեռ ինդԱր ձեւը՝ դի յաւելումով, իսկ այս ձեւն էլ ակնյայտօրէն համապատասխանում է Մշոյ, Դիադինի բարբառների ընդոր ձեւին:

Անդրադառնալով ցուցականների յոգնակի ուղղականի ձեւերին՝ Աճառեանը գրում է, որ բարբառներում ամենատարածուած ասոնք, ադոնք, անոնք ձեւերի եւ դրանց բոլոր տարբերակների (խոնք, իդոնք, ինոնք/ըստունք, ընտունք/աստունք, ադունք, անունք եւն.) նախաձեւերն են միջին հայերէնի «այսք, այդք, այնք, որոնք առաջանում են գրք. այսք, այդք, այնք ձեւերից՝ ներդաշնակութեան համար ներմուծելով ո ձայնաւորը», իսկ այնուհետեւ աւելացել է «ն (այսոնք, այդոնք, այնոնք)՝ նմանութեամբ բազմաթիւ այլ կարգի յոգնակիների անք, եանք, ունք՝ ինչպէս՝ հիմունք, շարժունք եւն.»¹⁴: Հարկաւ, բոլոր այս ձեւերը՝ թէ՛ գրաբարեան, թէ՛ միջինհայերէնեան եւ թէ՛ բարբառային, միմեանց հետ փոխկապակցուած են եւ նոյն իրողութեան տարատեսակ դրսեւորումներն են՝ ներկայացնելով լեզուի զարգացման տարբեր փուլերը: Սակայն համոզիչ չէ միջին հայերէնի եւ բարբառային ձեւերում ո կամ ու ձայնաւորների առկայութիւնը ներդաշնակութեան համար իբրեւ ձայնաւորական ներմուծում ներկայացնելը: Կարծում ենք՝ աւելի տրամաբանական կը լինի միջին հայերէնի, ապա եւ բարբառային ձեւերը առնչակցել գրաբարեան այսոքիկ, այդոքիկ, այնոքիկ ձեւերին, ինչպէս որ եզակի սեռականի ձեւերը առնչում են գրաբարի այսորիկ, այդորիկ, այնորիկ ձեւերին: Թւում է՝ երկու դէպքում էլ բարբառային ձեւերում ո կամ ու ձայնաւորի առկայութիւնը ներդաշնակութեան համար յետագայ ներմուծում չէ, այլ արձագանգն է հնագոյն իրողութեան, որի մասին վկայում է հենց ինքը՝ Աճառեանը: Խօսելով ցուցական այս, այդ, այն դերանունների գրաբարեան կարծ ու երկար ձեւերի մասին՝ նա գրում է. «Երկար ձեւը ունի միշտ -իկ վերջաւորութիւնը, որ պատճառ է դառնում նախորդ ձայնաւորի պահպանման.- այսպէս՝ երկար ձեւն է

այնորիկ, կարճը՝ այնր, որ առաջացել է նախաւոր *այնր ձեւից»¹⁵, ապա եւ համաձայնում է Մէյէի տեսակէտի հետ՝ այս, այդ, այն ցուցականների հին արմատներ համարելով այսո, այդո, այնո ձեւերը¹⁶: Ուրեմն, բարբառային ցուցականների թէ՛ եզակի, թէ՛ յոգնակի ձեւերի ոն կամ դրա հնչիւնափոխուած տարատեսակը պէտք է բխեցնել հենց այդ հին արմատների ո հնչիւնից եւ ոչ թէ համարել ներդաշնակութեան համար ներմուծուած ձայնաւոր:

Ցուցական դերանունների եզակի սեռականում կարեւոր յատկանիշ է տի ներմուծումը: Ղարիբեանը նշում է, որ ԿԸ ճիւղի բարբառները «ցուցական դերանունների հոլովուած ձեւերի մէջ տն չեն ունենում»¹⁷: Չահուկեանի բերած փաստերը եւս վկայում են, որ տի յաւելումը յատուկ է արեւելեան բարբառներին, իսկ արեւմտեաններից այդ յատկանիշն ունեն Մուշն ու Դիարիները¹⁸: Մեր կողմից դիտարկուող բարբառներում, այսպիսով, տի յաւելում չունի միայն Վանի բարբառը:

Այս յաւելման վերաբերեալ հայ լեզուաբանութեան մէջ արտայայտուել են տարբեր տեսակէտներ: Աճառեանը երեւոյթի սկզբնաւորումը ներկայացնում է այսպէս. «Ընդհանուր ձայնաբանական երեւոյթ է բոլոր լեզուների մէջ էլ՝ դատամականի յաւելումը ն եւ ը բաղաձայնների միջեւ. հայերէնից իբրեւ օրինակ յիշենք ծանր-ծանրը, մանր-մանրը: Այս օրէնքի համաձայն՝ նրա դարձաւ նրայ եւ հնչման հեշտութեան համար յենարանի յաւելումով՝ ընդրա: Այսպէս ձեւացան Գրք. ընդրա, ընդրան, Սրդ. ինդՄր, ինդՄրՄ, ինդՄրՄն ձեւերը»¹⁹: Այդ նոյն եղանակով, ըստ Աճառեանի, «այնր ձեւից դի յաւելումով առաջացել է *այնդր>*էնդր. եւ որովհետեւ վերջաձայն երեք բաղաձայնների հանդիպումը դժուար հնչելի երեւոյթ է, մէջտեղում ատելացել է ու ձայնաւորը»²⁰: Արեւելեան բարբառների այդ ու ձայնաւորին ԿԸ ճիւղի բարբառներում համապատասխանում է ասոր, ասոր, անոր սեռականների ոն: Բայց այդ երկուսի միջեւ Աճառեանը կապ չի տեսնում եւ համարում է, որ դրանք անկախաբար ներմուծուած են ներդաշնակութեան համար²¹: Ընդոր ձեւի նմանութեամբ էլ, ըստ Աճառեանի, առաջացել են հասուր, հտուր ձեւերը: Հուսկ, նա այս, այդ, այն (էս, էտ, էն) ցուցականների սեռականների ծագումը ներկայացնում է հետեւեալ կերպ. «Այսպիսով էստուր, էտուր, էնդուր եւ ասոր, ադոր, անոր միեւնոյն ձեւերն են եւ հաւասարապէս ծագում են գրք. այսր, այդր, այնր ձեւերից, նախաձայնը (այ) դարձնելով մի տեղ է, միւս տեղ ա, եւ բացի սրանից առաջին խմբի մէջ ներմուծելով դ, որ ն եւ ը բաղաձայնների յենարանն է, ինչպէս նաեւ ներդաշնակութեան համար ատելացնելով մի տեղ ու, միւս տեղ ո»²²:

Ցուցականների սեռականներում տի ներմուծումը եւ ընդհանրապէս այդ ձեւերի կազմութիւնը բոլորովին այլ կերպ է բացատրում Ղարիբեանը: Նրա կարծիքով՝ «այդ տն առաջ է եկել այն պատճառով, որ նախ հոլովուել է «այդ» դերանունը եւ ապա նրա վրայ ատելացել են այս, այդ եւ այն դերանուններն ու կազմել հոլովում, այսինքն՝ էտ, տուր, տուց, տով, տում, ապա՝ էս+տուր=էստուր, էս+տուց=էստուց, էս+տով=էստով, էս+տում=էստում»²³:

Սակայն իր միտքը շարունակելով՝ նա գրում է, թէ ՈԻՄ ճիւղի բարբառներում «ցուցական դերանունների հոլովման հիմքը ընդհանուր հայերէնի «դա» դերանուան սեռական ձեւն է, որը Ղարաբաղի բարբառում սկզբից ստանում է «էս», «էտ», «էն» ձեւերը եւ կորցնում «ո»ն. էս + դո-

րա>էստրա>ըստրա եւն.: Իսկ միւս բարբառներում, ընդհակառակը, «ոտրա» ձեւը կորցնում է «ա»ն եւ սկզբից ւաւեացնում նոյն էս, էդ, էն. էս +դո-րա>էսդոր>էստուր-ըստուր>էստու»²⁴: Հուսկ, նա եզրակացնում է, որ ՈՒՄ ճիւղի բարբառները «պահել են ընդհանուր հայերէնի այս, այդ, այն դերա-նունների ուղղական ձեւը՝ կորցնելով միւս հոլովները, իսկ սա, դա, նա դերա-նունների՝ միւս հոլովները, կորցնելով ուղղական ձեւը»²⁵: Երեւոյթին Ղարիբ-եանը միանշանակ մեկնաբանութիւն չի տալիս նաեւ ԿԸ ճիւղի բարբառների առնչութեամբ: Նախ գրում է, որ այստեղ ցուցական դերանունների սեռակա-նը կազմուում է՝ ուղղականի վրայ աւելացնելով օր, որ, ուր կամ նոյնիսկ ու վերջաւորութիւն²⁶: Սակայն քիչ անց անում է ասուածին հակասող հետեւու-թիւն՝ «Ուրեմն «Ար» ճիւղի բարբառների ցուցական դերանունների հոլովումը տարբեր հիմքով է: Այստեղ հոլովման հիմք են դառնում սա, դա, նա դերա-նունների սեռական սորա, դորա, նորա ձեւերը, որոնք կորցնում են վերջին «ա»ն եւ սկզբից ստանում էս, էտ, էն»²⁷:

Կարծում ենք՝ բարբառներում թէ՛ ցուցականների սեռականի ձեւերի կազմութիւնն ընդհանրապէս եւ թէ՛ դրանցում տի կամ դի ներմուծումը կա-րիք ունեն նորովի մեկնաբանութեան: Նախ, ինչպէս կարելի է ենթադրել վերն ասուածից, բարբառներում այս, այդ, այն դերանուններին համապատասխա-նող ձեւերը (էս, էտ, էն, աս, ատ, ան, էսի, էտի, էնի եւն.) սեռականում ուղ-ղականի վրայ ստանում են օր, որ, ուր կամ ար վերջաւորութիւն: Դրանք բոլորն էլ, կարծում ենք, առնչում են գրաբարեան այսր (այդր, այնր) եւ յատկապէս այսորիկ (այդորիկ, այնորիկ) ձեւերին: Այսինքն՝ ցուցական դե-րանունան բարբառներում հանդիպող սեռականի բոլոր ձեւերը (իսոր, իտոր, ինոր, ասոր, ատոր, անոր, ըստուր, ըտուր, ընդուր, ստուր, տուր, ընդուր, ը-սուր, ընուր, անուր, Մաիւր, Մդիւր, Մնիւր, ասօր, ադօր, անօր եւն.), որոնք աւարտուում են ր ձայնորդով²⁸ եւ նախընթաց որեւէ ձայնաւորով կամ երկ-բարբառով (օ, ո, ու, Ա, իւ), վերաբերում են այս, այդ, այն դերանուններին, եւ մեզ համար ընդունելի չէ Ղարիբեանի այն դիտողութիւնը, թէ այդ ձեւերը (ցուցականների թեք հոլովաձեւերը ընդհանրապէս) վերաբերում են սա, դա, նա դերանուններին: Չէ՞ որ կան բարբառներ, որոնք գուգահեռաբար պահպանել են սա, դա, նա դերանունները, եւ դրանց հոլովաձեւերը կազմութեամբ էականօրէն տարբերում են էս, էտ, էն դերանունների հոլովաձեւերից՝ այդպիսով եւս մէկ անգամ հաւաստելով մեր պնդումը: Այսպէս, Արարատեան բարբառում սա, դա, նա դերանունները, հենց Ղարիբեանի վկայութեամբ, հոլովում են գրականի պէս²⁹, այսինքն՝ սեռականում ունեն սրա, դրա, նրա ձեւերը, մինչդեռ էս, էտ, էն դերանունների սեռականներն են՝ ըստուր, ըտուր, ընդուր: Բերենք նաեւ այլ բարբառների դերանունների ուղղական եւ սեռական հոլովների գուգահեռ օրինակներ.

Պոլիս	Թբիլիսի	Ագուլիս	Նոր Նախիջեւան
սա աս	սա էս	սօ աս	սա աս
սրրա ասօր	սրրա էստու	սրօ աստուր	սարա ասօր

Մշոյ բարբառում ցուցական դերանունան երրորդ դէմքի համար գուգա-հեռ ինա (այն) եւ ընի (նա) ձեւեր է արձանագրել Ս. Բաղդասարեան-Թափալց-եանը³⁰: Այն եւ նա դերանուններին համապատասխանող այս ձեւերը եզակի թեք

Հոլովներում պահպանել են հոլովական օրինաչափությունները: Ինա դերանու-
 ուան սեռականը ունի որ կազմիչը (ընդոր), իսկ ընի դերանուան սեռականն
 աւարտուում է ըա խմբով (ընդրա), ինչը հայերէնում յատուկ է սա, դա, նա
 դերանուններին (սորա, դորա, նորա, սարա, դարա, նարա, սրա, դրա, նրա,
 ըստրրա, ըտրա, ընդրրա): Յոգնակի թւում այս դերանունները ձեւաւորման
 առումով նոյնանում են՝ հանդէս բերելով այն (էն, ինա) դերանուան
 յատկանիչներ, միայն ընի դերանուան դէպքում բառի կազմում կարող է լինել
 դ կամ՝ ոչ (ընդոնց կամ ընոնց), իսկ ինա դերանուան դէպքում գուգաձե-
 ւութիւն չկայ (ընդոնց): Ասուածը թոյլ է տալիս հայերէնի բարբառներում այս,
 այդ, այն եւ սա, դա, նա խմբերի գուգահեռները որոշելիս նկատի ունենալ
 հետեւեալ տարբերակիչ յատկանիչները:

ա) այս, այդ, այն խմբի դերանունների սեռական հոլովաձեւերը որպէս կանոն
 աւարտուում են ըով եւ նախընթաց որեւէ ձայնաւորով կամ երկբարբառով
 (երբեմն ուրիշ յետոյ հնարաւոր է ըի անկում), իսկ սա, դա, նա խմբի դերա-
 նունների սեռական հոլովաձեւերը աւարտուում են ըին յաջորդող ձայնաւորով,
 բ) ցուցականների թեք հոլովներում տ հնչիւնի ներմուծումը յատուկ է այս,
 այդ, այն խումբը ներկայացնող ձեւերին:

Իհարկէ, կան դէպքեր էլ, երբ այս, այդ, այն եւ սա, դա, նա տիպերի դե-
 րանունների թեք ձեւերը ազդել են միմեանց վրայ, կամ էլ, կարելի է ասել, տե-
 դի է ունեցել դերանուանական երկու տիպերի միաձուլում: Ի դէպ, այս, այդ,
 այն եւ սա, դա, նա դերանուանական խմբերի թէ՛ միաձուլման, թէ՛ փոխա-
 դարձ ազդեցութիւնների մի շարք օրինակներ է բերում Աճառեանը: Այսպէս,
 ըստ նրա՝ միջին հայերէնի «իսա, իտա, ինա ձեւացել են այս, այդ, այն եւ սա,
 դա, նա ցուցականների խառնուրդից»³¹, իսկ Պոլսի բարբառում ասոր, ադոր,
 անոր ձեւերի ազդեցութեամբ առաջացել են սաւի, դաւի, նաւի դերանունների
 սաւօր, դաւոր, նաւոր սեռականները³²:

Կարծում ենք՝ դերանուանական երկու խմբերի ազդեցութեան օրինակ է
 երեւան բերում նաեւ Ղարաբաղի բարբառը, որտեղ, օրինակ, էս (այս) դերա-
 նունը թեք ձեւերում իրեն բնորոշ տի հետ ունենում է սա ձեւին բնորոշ ըա
 խումբ:

Եզակի	Յոգնակի
Ուղղ. էս	ըստըհանք սըհանք ըստրրանք
Սեռ. ըստրրա	ըստըհանց սըհանց ըստրրանց

Փաստօրէն, այս, այդ, այն եւ սա, դա, նա ցուցականների փոխարաբե-
 ռութիւնների առումով հայերէնի բարբառները կարող են ներկայացնել երեք
 կարգի իրավիճակ:

ա) Գուցականների երկու տիպերի առկայութիւն՝ իրենց առանձին հոլովաձե-
 ւերով: Այսպիսի վիճակ ներկայացնում են, օրինակ, Արարատեան, Թբիլիսիի,
 Պոլսի, Ազուլիսի, Նոր Նախիջեւանի բարբառները:

բ) Միայն այս, այդ, այն տիպի դերանուններ ունեցող բարբառներ, ինչպիսիք
 են, օրինակ, Բայազետի, Խոյ-Մարաղայի, Վանի, Դիադինի, ընդհանուր առ-
 մամբ նաեւ Մշոյ բարբառները: Նկատենք, որ այս բարբառներում ցուցականի
 թեք հոլովաձեւերը իրականում արտայայտում են սա, դա, նա ցուցականների
 իմաստ, իսկ ուղիղ ձեւերը կարող են արտայայտել ե՛ւ այս, այդ, այն, ե՛ւ սա,

դա, նա ցուցականների իմաստ: Ի դէպ, Բայազէտի բարբառում եզակի ուղղականում երկու տիպերի ցուցականների իմաստային տարբերությունը դրսևւորւում է ձեւային տարբերութեամբ. այս, այդ, այն դերանունների իմաստը արտայայտւում է հս, հտ, հն, հսա, հտա, հնա ձեւերով, իսկ սա, դա, նա դերանունների իմաստը արտայայտւում է հսի, հտի, հնի, հսիկ, հտիկ, հնիկ, հսակ, հտակ, հնակ ձեւերով:

զ) Ցուցականների երկու տիպերի խառնուրդ ունեցող բարբառներ, ինչպիսին է, օրինակ, Ղարաբաղի բարբառը:

Բոլոր դէպքերում պարզ է, որ նշուած ցուցական դերանունների թեք հոլովածեւերը բարբառներում միշտ ունեն առարկայական, այսինքն՝ սա, դա, նա դերանունների իմաստ:

Ինչ վերաբերում է ցուցականների թեք հոլովածեւերում առաջնայեզուային պայթականի ներմուծման խնդրին, ապա կասկած չունենք, որ այն հնչիւնական յաւելում է եւ ոչ թէ այդ կամ դա դերանունան հոլովածեւի արտայայտութիւն: Բայց մենք չենք կարծում, թէ այդ ներմուծումը սկիզբ է առել նրա կամ այն ձեւերից եւ ապա տարածուել նաեւ միւս ձեւերում:

Բայազէտի բարբառում երեւոյթի դիտարկումը մեզ թոյլ է տալիս ենթադրել, որ հսի եւ հնի դերանունների ըստու եւ ընդու սեռականներում առաջնայեզուային յաւելական հնչիւնի առկայութիւնը նախ եւ առաջ հետեւանք է հտի դերանունան ըստ օրինաչափ սեռականի համաբանական ազդեցութեան, ընդ որում՝ ընդու ձեւում ներմուծուած պայթականի ձայնեղութիւնը ակնյայտօրէն հետեւանք է ն ձայնորդի ազդեցութեան: Չենք բացառում, որ պայթականի ներմուծման հարցում կարող է դեր խաղացած լինել եւ այն, որ Բայազէտի բարբառում (ինչպէս եւ այլ բարբառներում) թէ՛ ս, թէ՛ ն հնչիւններից յետոյ նկատւում է տի, դի յաւելման միտում, ինչպէս՝ պէստ (պէս), կԱյբաստ (ռուս. կայբասա), հուստակ (հյուս), ծԱնդըր (ծանր), մԱնդըր (մանր), սԱնդըր (սանր), թուղիր (թոնիր): Սակայն առաւել կարեւորում ենք մէկ այլ իրողութիւն: Արդի գրական արեւելահայերէնում մենք դիտարկում ենք հնչիւնաբանական հետեւեալ օրինաչափութիւնը.՝ միայն ձայնաւորից բաղկացած վանկ հնարաւոր է երեք դէպքում.

ա) բառասկզբում, եթէ ձայնաւորին յաջորդում է մէկ բաղաձայն (ասել, էջանչան, իմանալ, օտար, ուրախ),

բ) որեւէ դիրքում, եթէ բառում իրար են հանդիպում երկու ձայնաւորներ (էի, չէի, էակ, բերէի, կակառ, Լաոսի, Լաուրա),

գ) միահնչիւն բառում (է, ու):

Գրական արեւելահայերէնում ը ձայնաւորը երբեք մէկ այլ ձայնաւորի չի նախորդում, բառասկզբում մէկ բաղաձայնից առաջ չի հանդիպում եւ առանձին իբրեւ բառ հանդէս չի գալիս, հետեւաբար՝ ըն երբեք ինքնուրոյն վանկ չի դառնում: Այդպէս է եւ Բայազէտի բարբառում: Նշանակում է՝ հսի>ըսու, հնի>ընու ձեւերը Բայազէտի բարբառում դառնում են անհնար՝ բարբառի օրէնքներին հակասող վանկակազմութեան (ը-սու, ը-նու) պատճառով: Ահա թէ ինչու՝ վիճակը շտկուել է տի ներմուծման միջոցով ըից յետոյ բաղաձայնական իմբի ձեւաւորումով, ինչին նպաստել են նախորդ երկու հանգամանքները³⁸: Մեր դիտարկման ճշմարտացիութիւնն է հաւաստում Բայազէտի բարբառի նաեւ հետեւեալ իրողութիւնը. երբ հսի, հտի, հնի դերանունների՝ ը ձայնաւոր

րով սկսուող ձեւերում (ըստու, ըտու, ընդու, ըստոնց, ըտոնց, ընդոնց եւն.) առաջին բաղաձայնից յետոյ ներմուծուում է ցուցականութիւնն ընդգծող ա յաւելուածը, մէկ բաղաձայնից առաջ դիրքը ըի համար դառնում է անհնար, եւ այն փոխարինուում է հով, իսկ նից հեռացած դին փոխարինուում է նախնական տն՝ հաստու, հտատու, հնատու, հսատոնց, հտատոնց, հնատոնց եւն.: Ի դէպ, համանման իրողութիւն դիտարկուում ենք եւ գրաբարում: Այսպէս, երբ գրաբարեան ինն թուականի թեք ձեւերում ի ձայնաւորը շեշտից գրկուում էր, տեղի էր ունենում ի>ը փոփոխութիւն (ըննի, յըննէ, ըննից), բայց երբ ըն պիտի յայտնուէր մէկ բաղաձայնից առաջ, նման փոփոխութիւն տեղի չէր ունենում (ինունք, գինունս):

Բայագէտի բարբառում ցուցականների սեռական հոլովաձեւերում առաջնալեզուային պայթականի ներմուծման հանգամանքների վերհանումը թոյլ է տալիս նոյն ելակէտով նայել այլ բարբառների իրողութիւններին: Այսպէս, թուում է՝ սխալուած չենք լինի, եթէ պնդենք, որ վանի բարբառի իսոր, ինոր սեռականներում առաջնալեզուային պայթականի ներմուծումը անհրաժեշտ չի եղել, քանի որ բառասկզբում առկայ է ոչ թէ ը, այլ ի: Մինչդեռ Դիագինի եւ Արարատեան բարբառներում այդ ներմուծումը առկայ է եւ ուղեկցուում է բառասկզբի ը ձայնաւորով (ըստոր, ընդոր, ըստուր, ընդուր): Իսկ Մշոյ բարբառում իդա դերանուան իդոր սեռականում մէկ բաղաձայնից առաջ ունենք ի, մինչդեռ ինա դերանուան ընդոր սեռականում ի>ը փոփոխութիւնն ուղեկցուում է պայթականի ներմուծմամբ եւ բաղաձայնական իմբի ձեւաւորումով: Բնականաբար, տարբեր բարբառներում այս, այդ, այն տիպի դերանունների թեք ձեւերում տ (դ) հնչիւնի ներմուծումը կամ դրա բացակայութիւնը կարող է պատճառաբանուած լինել տարբեր հանգամանքներով, սակայն Բայագէտի եւ այլ բարբառների իրողութիւնները վկայում են, որ երեւոյթը հիմնականում պէտք է պայմանաւորել տուեալ բարբառի հնչիւնաբանական իւրայատկութիւններով, հնչիւնական փոխազդեցութիւններով:

Ասուածից եզրակացնում ենք, որ հայերէնի բարբառներում ցուցական դերանունների՝ նախընթաց որեւէ ձայնաւորով (կամ երկբարբառով) եւ ըով աւարտուող սեռականի ձեւերը (նաեւ մնացած բոլոր հոլովաձեւերը), ինչպէս նաեւ տի ներմուծում ունեցող ձեւերը, որպէս կանոն, վերաբերում են ցուցականների այս, այդ, այն իմբին, իսկ ըով եւ նրան յաջորդող ձայնաւորով աւարտուող սեռականները (նաեւ միւս հոլովաձեւերը) վերաբերում են ցուցականների սա, դա, նա իմբին: Այս իմաստով ակնյայտ է առնչակցութիւնը գրաբարեան համապատասխան ձեւերին՝ այս-այսր կամ այսորիկ, սա-սորա: Առանձին բարբառներում դիտարկուում են միաձուլուած, ազդեցութիւնների հետեւանքով առաջացած ձեւեր: Այս, այդ, այն ցուցականների բարբառային ձեւերում (ուղիղ եւ թեք) իրենց արձագանգներն ունեն հայագէտների նշած հնագոյն արմատական ձեւերի ո հնչիւնը, այդ դերանունների գրաբարեան երկար հոլովաձեւերի որ եւ իկ կազմիչները: Ինչ վերաբերում է հիմնականում արեւելեան բարբառներում այս, այն ցուցականների համապատասխան թեք ձեւերում տ(դ)ի ներմուծմանը, ապա այն ամենայն հաւանականութեամբ արդիւնք է այդ դերանուան համապատասխան ձեւերի համաբանական ազդեցութեան, որին թերեւս նպաստում են նաեւ բարբառային հնչիւնաբանական որոշակի իրողութիւններ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Ս. Ղազարեան, *Հայոց Լեզուի Համառոտ Պատմութիւն*, Երեւան, Երեւանի Պետական Համալսարանի Հրատ., 1981, էջ 249:
- ² Արարատ Ղարիբեան, *Հայ Բարբառագիտութիւն*, Երեւան, Հայկ. ՍՍՌ Պետական Հեռակայ Մանկավարժական Ինստիտուտ, 1953, էջ 153:
- ³ Այս ձեւերին յատուկ չենք անդրադառնայ, որովհետեւ Արարատեան բարբառում դրանք գրեւորուում են այնպէս, ինչպէս գրական արեւելահայերէնում:
- ⁴ Հետաքրքրական է, որ Բայազէտի բարբառում ա յաւելուածը ցուցականութիւնն ընդգծող դերով ներմուծուում է ցուցականների բոլոր հորովածներում եւ ձեւաւորում է զուգահեռ ձեւեր, ինչպէս՝ ըստու-էսատու, ըստուց-էսատուց, ըստոնք-էսատոնք, ըստոնցից-էսատոնցից եւն.:
- ⁵ Հրահայ Աճառեան, *Լիակատար Քերականութիւն Հայոց Լեզուի*, Հտր. 2, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ, 1954, էջ 235:
- ⁶ Նոյն, էջ 195-196:
- ⁷ Գէորգ Ջահուկեան, *Հայ Բարբառագիտութեան Ներածութիւն*, Երեւան, Հայկ. ՍՍՀ ԳԱ, 1972, էջ 87:
- ⁸ Աճառեանը կարծում է, թէ իսոր, իդոր, ըստոր, ըստուր եւ այլ կարգի միւս սեռականները առաջացել են գրաբարեան այսր, այդր, այնր ձեւերից, եւ բարբառային ձեւերում ո եւ ու ձայնաւորները ներմուծուած են ներդաշնակութեան համար եւ իրար հետ կապ չունեն (Աճառեան, էջ 227-230):
- ⁹ Ղարիբեան, *Հայ Բարբառագիտութիւն*, էջ 386:
- ¹⁰ Աճառեան, էջ 227:
- ¹¹ Նոյն, էջ 228:
- ¹² Ղարիբեան, էջ 347: Ի դէպ, համանման իրողութիւն ես դերանուան հորովման մէջ դիտարկել է եւ Աճառեանը Վանի բարբառում:
- ¹³ Աճառեան, էջ 198
- ¹⁴ Նոյն, էջ 231:
- ¹⁵ Նոյն, էջ 174:
- ¹⁶ Նոյն, էջ 181:
- ¹⁷ Ղարիբեան, էջ 157:
- ¹⁸ Ջահուկեան, էջ 88-99:
- ¹⁹ Աճառեան, էջ 228:
- ²⁰ Նոյն, էջ 229:
- ²¹ Նոյն:
- ²² Նոյն, էջ 230:
- ²³ Ղարիբեան, էջ 157:
- ²⁴ Նոյն, էջ 158:
- ²⁵ Նոյն:
- ²⁶ Նոյն:
- ²⁷ Նոյն, էջ 159:
- ²⁸ Երբեմն այդ բն ընկնում է:
- ²⁹ Նոյն, էջ 153:
- ³⁰ Ս. Հ. Բաղդասարեան-Թափալցեան, *Մշոյ Բարբառը*, Երեւան, Հայկ. ՍՍՌ ԳԱ, 1958, էջ 96:
- ³¹ Աճառեան, էջ 188:
- ³² Նոյն, էջ 228:

³³ Թւում է, թէ ասուածին կարող են հակասել ըտու (ը-տու) սեռականը եւ դրանից կազմուած ձեւերը (ըտուց, ըտով, ըտոնք եւն.), սակայն նախ այս դիրքը միակն է, որտեղ ըին յաջորդում է մէկ բաղաձայն (ուստի այն չէր կարող խանգարել ընդհանուր օրինաչափութեանը), եւ բացի այդ՝ տի հպման ամենափոքր երկարաձգումն իսկ կարող է ընկալուել իբրեւ ըտ-տու օրինաչափ վանկակառոյց:

THE CHARACTERISTICS OF DEMONSTRATIVE PRONOUNS IN
ARMENIAN DIALECTS
(Summary)

VICTOR KATVALIAN

The author examines the development of two groups of demonstrative pronouns in Armenian dialects, namely *ays*, *ayt*, *ayn* and *sa*, *ta*, *na*.

He highlights the fact that unlike the *ays*, *ayt*, *ayn* demonstrative pronouns that exist in all Armenian dialects in their original or variegated forms, several dialects lack the *sa*, *ta*, *na* demonstrative pronouns.

The author notes that the *ays*, *ayt*, *ayn* pronouns have more versions, are more numerous in their construction details and possess more grammatical features in the dialects than the *sa*, *ta*, *na* pronouns. After analysing this diversity, the author concludes that the causes of this difference have their roots in classical Armenian, Grabar.

The author examines the absence of the *sa*, *ta*, *na* pronouns in several dialects and notes that in a number of dialects these evolved into new combined or mixed forms.

The author traces back grabar features in the dialect forms of these demonstrative pronouns and examines both phonetic and other influences that have led to such a multiplicity of versions and variables in the evolution of these six demonstrative pronouns.